

ՀՆԱԳԵՏԸ ԱԿՍԵԼ ԲԱՎՈՒՑԻ «ԱԼՊԻԱԿԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ»-ՈՒՄ ARCHAEOLOGIST IN THE "ALPINE VIOLET" OF AXEL BAKUNTS АРХЕОЛОГ В «АЛЬПИЙСКОЙ ФИАЛКЕ» АКСЕЛЯ БАКУНЦА

Անի Պետրոսյան¹, Կարեն Բայրամյան², Արտակ Գնունի^{3*}

Ani Petrosyan¹, Karen Bayramyan², Artak Gnuni^{3*}

Ани Петросян¹, Карен Байрамян², Артак Гнуни^{3*}

¹ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences, Armenia
Институт археологии и этнографии, Национальная академия наук, Армения

² Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Հայաստան
Министерство образования, науки, культуры и спорта, Армения
Ministry of Education, Science, Culture and Sports, Armenia

³ Երևանի պետական համալսարան, Հայաստան
Yerevan State University, Armenia
Ереванский государственный университет, Армения

* Գրագրություն վարող հեղինակ՝ a.gnuni@ysu.am
Author for correspondence: a.gnuni@ysu.am
Автор, ведущий корреспонденцию: a.gnuni@ysu.am

Հեղինակների ներդրումը. ԱՊ – գաղափար, շարադրում; ԿԲ և ԱԳ – խմբագրում
Author contrubutios: AP – conceptualization, writing original draft; KB and AG – editing
Вклад авторов: АП – концептуализация, написание текста; КБ и АГ – редактирование

Հեղինակները հայտարարում են շահերի բախման բացակայության մասին
The authors declare no competing interests
Авторы заявляют об отсутствии конфликта интересов

Ներկայացվել է՝ 11.05.2025; գրախոսվել է՝ 09.07.2025; ընդունվել է՝ 10.12.2025
Received: 11.05.2025; Revised: 09.07.2025; Accepted: 10.12.2025
Представлено: 11.05.2025; рецензировано: 09.07.2025; принято: 10.12.2025

© Հեղինակ(ներ), 2025: Հոդվածը տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author(s), 2025. This article is distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор(ы), 2025. Статья распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.3-257

Ամփոփում – Ակսել Բակունցը «Ալպիական մանուշակ» պատմվածքը գրել է 1925–1927 թթ.: Պատմվածքում ներկայացվում են Լեռնային Հայաստանի պատկերները՝ ալպիական լանդշաֆտը, ավերակ բերդերը, գյուղական կենցաղի տեսարանները: Իրադարձությունների կենտրոնում է Կաքավաբերդը: Պատմվածքի հերոսներն են հնագետը, նկարիչը, հասարակ մարդիկ: «Ալպիական մանուշակը» թեև չունի հստակ սյուժե, բայց բնորոշվում է հզոր ենթատեքստով: Նկարիչը գերզգայուն և բնության գեղեցիկը ներկայում գնա-

հատող անձ է: Մինչդեռ հնագետի համար գոյություն ունի միայն անցած-գնացած գեղեցիկը. նա հետաքրքրվում է միայն իր մասնագիտությամբ և չի զգում բնության գեղեցկությունը: Բակունցը նկարչի և հնագետի կերպարներով բնութագրում է այն մարդկանց, որոնք աշխարհին նայում են «բզեզի աչքերով», չեն նկատում բուն իրականությունը. նրանք գալիս, տեսնում են ներկայի և անցյալի գեղեցիկը և հեռանում, իսկ կյանքի բուն էությունը վրիպում է նրանց ուշադրությունից: Ներկայացվող աշխատանքը, ելնելով արխիվային տվյալներից, ճշտում է մտցնում այն հարցում, թե ով կարող էր լինել «Ալպիական մանուշակ»-ում հիշատակվող հնագետը: Մասնավորապես առկա տվյալները ցույց են տալիս, որ հնագետին հիմնականում մարմնավորում է Մորուս Հասրաթյանը: Բակունցը և Հասրաթյանը մտերիմներ են եղել, միասին այցելել են Կաքավաբերդ: Սակայն հնարավոր է, որ հնագետի հավաքական կերպարը անձնավորել է նաև Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի գիտնական քարտուղար Աշխարհբեգ Քալանթարը, որի հետ Բակունցը առնչություններ է ունեցել 1924–1926 թթ., երբ աշխատել է Գորիսում՝ որպես Զանգեզուրի գավառական գյուղատնտես և 1926–1931 թթ. Երևանում որպես Հողօրկոմատի հողվարչության պետի տեղակալ:

Summary – Aksel Bakunts wrote the story "Alpine Violet" in 1925–1927. The story describes images of Mountainous Armenia: the alpine landscape, ruined fortresses, scenes of rural life. Kakawaberd fortress is at the center of the events. The heroes of the story are the archaeologist, the painter, and common people. Although the "Alpine Violet" does not have a clear plot, it is characterized by a very profound subtext. The painter is a person who is hypersensitive and appreciates the beauty of nature in the present. Meanwhile, for the archaeologist, only the beauty of the passed times is important: he is a person, interested only in his profession and not feeling the tenderness of nature. Bakunts characterizes those persons who look at the world "through the eyes of a beetle", and do not notice the true reality. They come and see the beauty of the present or the past and leave, while the very depth of life escapes their attention. The present contribution, based on archival documents, makes clarifications in personality of the archaeologist mentioned in "Alpine Violet". In particular, the available data show that the archaeologist is mainly embodied by Morus Hasratyan. Bakunts and Hasratyan were close friends, they visited Kakawaberd together. However, it is possible that the collective image of the archaeologist also reflects the scientific secretary of the Committee for the Preservation of Antiquities of Armenia, Ashkharbeg Kalantar, with whom Bakunts had contacts in 1924–1926, when he worked in Goris as a provincial agronomist of Zangezur, and in 1926–1931, when he functioned in Yerevan as a deputy head of the Land Department of the People's Land Committee.

Аннотация – Рассказ «Альпийская фиалка» был написан Акселем Бакунцем в 1925–1927 гг. В рассказе представлена Горная Армения с ее альпийскими пейзажами, руинами крепостей, сценами сельской жизни. Центром событий является Какаваберд. Герои рассказа – археолог, художник и простые люди, которые смотрят на мир «глазами жука», не замечая реальности. Хотя и в рассказе нет конкретного сюжета, но в нем есть глубокий подтекст. Один из героев рассказа – художник, наделенный тонкостью чувств и восприятия окружающей его природы, в то время как для другого персонажа – археолога – существует лишь красота прошлого, он интересуется только своей профессией и не замечает красоты природы. Писатель, противопоставляя эти два образа, характеризует людей, которые проживают свою жизнь, не постигая ее глубины и противоречий. В настоящей статье, на

основе архивных материалов, уточняется, кем мог быть археолог – один из героев произведения А. Бакунца. В частности, имеющиеся данные указывают на то, что под образом археолога подразумевается Морус Асратян, поскольку А. Бакунц и М. Асратян были близкими друзьями. Однако не исключено, что собирательный образ археолога восходит к учёному секретарю Комитета по охране древностей Армении Ашхарбегу Калантару, с которым Бакунц поддерживал тесные отношения в 1924–1926 годах, будучи губернским агрономом Зангезура, и в 1926–1931 годах, когда занимал пост заместителя заведующего земельным отделом Народного земельного комитета в Ереване.

Հիմնաբառեր – Բակունց, «Ալպիական մանուշակ», լանդշաֆտ, հերոսներ, հնագետ:

Keywords – Bakunts, "Alpine Violet", landscape, actors, archaeologist.

Ключевые слова – Бакунц, «Альпийская фиалка», ландшафт, персонажи, археолог.

Ներածություն

«Ալպիական մանուշակը» Ակսել Բակունցի առաջին գործերից է, որում խտացված են հեղինակի աշխարհայացքի հիմնական տարրերը: Պատմվածքը գրվել է 1925–1927 թթ., առաջին անգամ հրապարակվել 1927 թ. «Խորհրդային Հայաստան» թերթի հունվարի 1, 2-ի համարներում, ապա և՛ «Մթնածոր» (Երևան, «Հայպետհրատ», 1927) և՛ «Սև ցելերի սերմնացանը» (Երևան, «Հայպետհրատ», 1933) ժողովածուներում (Գրականության ինստիտուտ 1959, 275, 281; Հովսեփյան և այլք 1999, 213; մանրամասն՝ Իշխանյան 1960, 98, 109, 136–139; 1976, 645–646; Աթաբեկյան 1996, 89–114):

«Ալպիական մանուշակն» ունի խոր ենթատեքստ. մի կողմից, այն «Հայաստանի պատմության, բնության ու մարդկանց բանաստեղծական մանրանկար տարեգրությունն է» (Աղաբաբյան 1963, 82), մյուս կողմից, շոշափում է համամարդկային խնդիրներ՝ գեղեցիկի ընկալման տարբեր ձևերի, դրանց օբյեկտիվ կամ սուբյեկտիվ լինելու վերաբերյալ:

Ներկայացվող հոդվածում, սակայն, մեր գերխնդիրը չէ անդրադառնալ Բակունցի կենսագրությանն ու աշխարհայացքին, ինչը վաղուց արել են գրականագետները (հմմտ. Մկրտչյան 1958; Գրականության ինստիտուտ 1959; Իշխանյան 1960; 1965, 1974; Աղաբաբյան 1963; Աթաբեկյան 1996; Հովսեփյան և այլք 1999; Գասպարյան 2009. «Ալպիական մանուշակի» մեկնության համար, հմմտ., օրինակ, Աղաբաբյան 1963, 82–89; Իշխանյան 1974, 155–159): Մեր նպատակն ավելի կոնկրետ է՝ հնարավորինս նույնականացնել պատմվածքի գործող անձանց և մասնավորապես՝ հնագետին, 1920-ական թթ. հնագիտության պատմության տեսանկյունից (խնդրի նախնական քննարկումը տե՛ս Բայրամյան և այլք 2022):

«Ալպիական մանուշակ» պատմվածքը

«Ալպիական մանուշակը» սովորական իմաստով սյուժե չունի: Պատմվածքը սկսվում է Կաքավաբերդի բնապատմական միջավայրի գեղարվեստական նկարագրությամբ, ապա հայտնվում են երեք ծիավորներ, որոնք բարձրանում են

այդ բերդը: Նրանցից մեկը հնագետն է, երկրորդը՝ նկարիչը, իսկ երրորդը ուղեկցում է նրանց: Հնագետը երկար շրջում է բերդում, գտնում Բակուր իշխանի դամբանը (հեղինակը թերևս նկատի ունի Սյունյաց Բակուր նահապետին, II դ. կամ Բակուր Սյունի իշխանին, V դ.): Նկարիչը գծանկարում է հուշարձանի՝ հնագետին անհրաժեշտ հատվածները: Վերադարձին նրանք մոտակա բնակավայրի մի վրանի մոտ իջնում են ձիերից և թեյ խնդրում գյուղացի կնոջից: Մինչ կինը թեյ է պատրաստում, նկարիչն ընկղմվում է անցյալի հուշերի մեջ՝ վերհիշելով մի կնոջ, որն այնքան նման էր գեղջկուհուն: Պատմվածքում փայլուն կերպով նկատվում է Բակունցի հետագա ստեղծագործություններին բնորոշ ընդհանուր ոճը. մասնավորապես, երբ հեղինակն իր գրվածքը «դարձնում է ոչ թե փաստերի ու երևույթների ապաստարան, այլ գեղարվեստական իդեալների որոնման մարտադաշտ» (Աղաբաբյան 1963, 394):

«Ալպիական մանուշակ»-ում ժամանակը կարևոր դեր չի խաղում, ավելին, այն գրեթե բացակայում է (հմմտ. «Ե՛վ գյուղում, և՛ բերդի գլխին ժամանակը սահում է դանդաղ, տարիները նույն ծառի միանման տերևներն են»)՝ մոտենալով առասպելական անչափելիության: Այս իմաստով, թերևս պատահական չէ, որ վերոհիշյալ նախադասությունից առաջ և հետո Բակունցը հիշում է ոմն ծերունու, որը ձեռնափայտով ավազի վրա նշաններ է գծում, նշանների հետ փորփորում գլխով անցածն ու խառնում իրադարձությունները (հմմտ. հայկական հեքիաթների ժուկ-ժամանակը մարմնավորող ալեհեր ծերունուն): Առասպելական ժամանակի վկան է նաև յուրահատուկ լռությունը, որ գերիշխում է «Ալպիական մանուշակ»-ում, ինչպես նաև Բակունցի այլ ստեղծագործություններում: Սա նախնադարյան մի լռություն է. լռում է հեղինակը, լռում են հերոսները, լսվում է միայն բնության ձայնը (հմմտ. Աթաբեկյան 1996, 89): Բակունցի ստեղծագործության անժամանակ և հեքիաթային բնույթը նկատել են գրականագետները (Գրականության ինստիտուտ 1959, 8): Այս իմաստով հատկապես դիպուկ են բակունցագետ Ս. Աղաբաբյանի խոսքերը «Մթնաձորի» մասին. «Բնության և կյանքի հեթանոսական բռնկումն է այս գյուղերի բնակիչների գերագույն կիրքը, հնադարի շունչ կա նրանց պատկերացումների վրա, առասպելն ու հեքիաթն է աշխարհաճանաչողության ստույգ աղբյուրը, նրանց կենցաղի դիմը կարգավորող ուղղությունը, հնաբույր է նրանց խոսքն ու զրույցը» (Աղաբաբյան 1963, 94):

Պատմվածքում հիշվում են ընդամենը երկու տեղանուն՝ Կաքավաբերդը և Բասուտա գետը: Մեզ հայտնի են երկու Կաքավաբերդ, որոնցից մեկը՝ առավել հայտնին, գտնվում է Ազատ գետի աջ ափին (որ հայտնի է նաև Գեղի անվամբ), մյուսը նույնանուն բերդն է Սյունիքում, այժմյան Գեղի գյուղի տեղում: Այն, որ Կաքավաբերդը հիշվում է Բասուտա գետին կից, կասկած չի թողնում, որ Բակունցը նկարագրում է Սյունիքի Կաքավաբերդը (հմմտ. Հուշարձանների ցուցակ 2002, Սյունիք, Գեղի գյուղ, 8.26, Ամրոց Գեղի, Գեղվա ձորում, X դ.: Ըստ Ռ. Իշխանյանի՝ խոսքը Մեղրու շրջանի Կաքավաբերդի/Կքբերդի մասին է, որի ավերակները Կալեր-Վանքի մոտակայքում են, Վահրավար և Գուղեմնիս գե-

տերի միջև՝ Իշխանյան 1976, 647, հմմտ. Հակոբյան և այլք 1988, 76 և Հուշարձանների ցուցակ 2002, Սյունիք, Վահրավար գյուղ, 8.88, Ամրոց Կաքավաբեր, Բ.ա. I հազ. – Բ.հ. XVII–XVIII դդ.):

Բասուտը (կամ Ծավը), Արաքսի ծախակողմյան վտակն է, սկիզբ է առնում Ծավ գյուղի խիտ անտառներում, հոսում է Ծավ և Հանդ գյուղերով և թափվում Արաքս գետը: Սա Մթնածորի տարածքն է՝ ներկայիս Շիկահողի արգելոցի մի մասը (Հակոբյան և այլք 1986, 613; 1988, 843):

«Ալպիական մանուշակի» գործող անձինք են՝ նկարիչը, հնագետը, նրանց ուղեկցողը, գյուղացի կինը, վերջինիս տղան ու ամուսինը (հնձվորը): Այս մարդկանց, ըստ իրենց աշխարհայացքի, կարելի է դասել երեք հիմնական խմբերի:

Առաջինը՝ նկարիչը, գերզգայուն մարդ է, նա իր մեջ լիովին վերապրում է բնությունը, հիանում բնության ամեն մի տարրով: Նրան հետաքրքրում է առավելապես բնության, քան մարդու ստեղծածը (հմմտ. «Եվ երբ հնագետը բուրգի ծայրից կանչեց, թե ինքը գտել է Բակուր իշխանի դամբանը, նկարիչը չհասկացավ նրա խոսքը: Աչքն անգղների պտույտի հետ էին...»): Բայց նա նկատում է նաև մարդկանց, գնահատում վերջիններիս արտաքին ու ներքին գեղեցկությունը (հմմտ. գյուղացի կնոջ հետ կապված դրվագը պատվածքի վերջում):

Երկրորդը՝ հնագետը անտարբեր է բնության նկատմամբ, նրան հետաքրքրում է միայն մարդու ստեղծածը, այն էլ՝ անցյալում (հմմտ. «Կաքավաբերդի քարերն ասես կենդանացել ու խոսում էին հնագետի հետ: Նա մոտենում էր այս ու այն քարին, կռնում, նայում, չափում, ինչ-որ գրում, ոտքով փորում հողի փվածքը, բաց անում հողի տակ թաղված տաշած քարի ծայրը: Նա բարձրացավ պարսպի վրա, գլուխը դուրս հանեց բուրգի դիտարանից և բարձր կանչեց, երբ բուրգի անկյունում, քարի վրա, տեսավ փորագիր խոսքեր»): Հնագետն ամբողջովին սևեռված է անցյալի վրա, չի զգում իրեն շրջապատող բնության գեղեցկությունը, արդի աշխարհը (հմմտ. «Հնագետը չէր տեսնում ո՛չ մանուշակ, ո՛չ խոտ: Նրա կոշիկները կրնկակոխ էին անում խոտ ու ծաղիկ»... «Աշխարհը նրա համար ընդարձակ թանգարան էր, ուր չկար ոչինչ կենդանի և ոչ մի բզեզ: Նա պոկոտում էր քարերին փաթաթված բաղեղը, փայտի ծայրով արմատախիլ անում քարի ճեղքում բուսած մանուշակը, ձեռքով քարը շոյում և սրբում գրերի հողը»):

Երրորդը սովորական մարդն է (հնձվորը, նրա ընտանիքի անդամները կամ ուղեկցողը), որին չեն հետաքրքրում հնագետի և նկարչի ձգտումները. նա ապրում է հանապազօրյա հոգսերով: Նրա համար տարօրինակ է հնագետի ու նկարչի վարքագիծը. նրան թվում է, թե այս մարդիկ իրականում ոսկե գանձեր են փնտրում, այլապես նրանց գործունեությունը իմաստ չի կարող ունենալ:

Այս երեք տիպի մարդկանց, իրեն բնորոշ լակոնիկությամբ, այսպես է բնորոշում Բակունցը. «Եթե հնագետի գլխում Բակուր իշխանն էր և մատենագրի մագաղաթը, նկարիչը հիշում էր մանուշակները, և լսում Բասուտա գետի խուլ աղմուկը, – երրորդ ձիավորի աչքի առաջ թարմ լավաշներ էին, պանիր ու մածուն»: Եթե հնագետի ու նկարչի նման մարդկանց համար կյանքը ժամանց է

միայն, անկիրք հիացմունքի ու արբեցման առարկա, ինչը նմանվում է բզեզի վարքագծին (հմմտ. կրկնվող ռեֆրենը՝ «ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք էր թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան»), ապա սովորական մարդու համար՝ հոգս ու գոյության կոփվ:

Անշուշտ, այս երեք տիպի մարդկանց էլ իր մեջ կրում է Բակունցը: Բակունցի անհատականության այս եռատվածությունը արտահայտում է նրա կենսագրությունը: Ծագումով նա գյուղացի էր, աշխարհայացքով՝ գրող (արվեստագետ), կրթությամբ՝ գիտնական (գյուղատնտես): Սակայն ակնհայտ է, որ նրան ամենահարազատը նկարիչն է, ինչը հստակ երևում է «մեկ այլ» կնոջ մասին մոտորումներից, որտեղ կինն ու նկարիչը կենսագրական դրվագում միասին են հիշվում (որոշ գրականագետներ Բակունցին բնորոշում են հենց որպես «բնանկարիչ»)՝ Գրականության ինստիտուտ 1959, 81, 208; Աղաբաբյան 1963, 250; Իշխանյան 1974, 330; 1979, 94; Աթաբեկյան 1996, 300):

Մեզ հատկապես հետաքրքրում է Բակունց գիտնականը: Այս իմաստով պետք է նշել, որ բացի գյուղատնտեսից, Բակունցի մեջ ապրում էր նաև հնագետ-պատմաբանը, ինչի մասին է վկայում կենսագրական մի դրվագ: Ճեմարանում ուսուցանելու ընթացքում արդեն նա որոշել էր պատմաբան դառնալ, բայց ուսուցիչներից Աշոտ Հովհաննիսյանը, կարդալով նրա պատմական բնույթի շարադրությունը, խորհուրդ է տալիս ընտրել գրողի ուղին (Հովսեփյան և այլք 1999, 32; հմմտ. Իշխանյան 1979, 94): Գրող դառնալուց հետո էլ, սակայն, Բակունցին շարունակում էր հետաքրքրել պատմությունը. նա կատարում էր միջնադարյան հուշարձանների (Տաթև, Վահրավար, Բղենո Նորավանք. ի դեպ, վերջինիս վերահայտնաբերողն է) ուսումնասիրություններ, ունի նաև համապատասխան աշխատանքներ (Իշխանյան 1960, 66, 117; Սյունյաց երկիր 2024, 114, 124): Ավելին, իր նկարագրական մեթոդով Բակունցն ինքն իրեն համարում էր պատմագիր՝ նոր օրերի յուրատեսակ պատմիչ (Աթաբեկյան 1996, 303): Թերևս գիտնականին բնորոշ այս ռացիոնալ հատկանիշն է, որ Բակունցի գեղարվեստական նկարագրությունները մոտեցնում է իրականությանը: Այս կապակցությամբ Կ. Ջելինսկին նկատում է, որ հայ ազգային յուրահատկությունը բացահայտելու տեսանկյունից Բակունցի երկերը շատ ավելին են տալիս, քան կարող են տալ գիտական բազում սովոր հատորներ (Գրականության ինստիտուտ 1959, 16; հմմտ. Իշխանյան 1979, 100):

Ուրեմն, հիշյալ եռատվածությունը հեղինակին դարձնում է է՛լ ավելի ամբողջական (հմմտ. Ռ. Զարյանի խոսքերը Բակունցի անհատականության մասին՝ «Այ քեզ ամբողջական անձնավորություն», տե՛ս Զարյան 1975, 67):

Ստեղծագործողի այս տեսակը մեզ հիշեցնում է Վահան Տերյանին, որը, որպես գյուղից դուրս եկած ապագա արևելագետ-պատմաբան, տառապում էր ռացիոնալ գիտելիքի և պոեզիայի սահմանագծին և, ի վերջո, ընտրում է երկրորդը (Պետրոսյան 2022. Բակունցի և Տերյանի հարազատության մասին հմմտ. Իշխանյան 1979, 99; Գասպարյան 2009, 91–93; Սյունյաց երկիր 2024, 22):

Հնագետի նույնականացումը

Հարց է առաջանում՝ արդյո՞ք նկարագրվող կերպարները զուտ հավաքական են, թե՞ կան կոնկրետ անձեր (նախատիպեր), որոնք օրինակ են դարձել Բակունցի համար պատմվածքը գրելիս: Մասնագետների մի մասը գտնում է, որ Բակունցն իր հերոսների համար մշտապես ունի կոնկրետ նախատիպեր, մյուս մասը չի կարևորում նախատիպերի առկայությունը և հստակ անձնավորումները (հմմտ. Աթաբեկյան 1996, 89–90):

Ստորև անդրադառնանք «Ալպիական մանուշակ»-ում հիշվող հիմնական կերպարների նույնականացմանը՝ կենտրոնանալով հնագետի վրա:

Սկսենք գյուղացի կնոջից, որը հիշողություններ է առաջացնում համանման մեկ այլ կնոջ մասին: Այդ «մեկ այլը» ազգագրագետ Եվգենիա/Ժենյա Գյուզալյանն է, որի հետ Բակունցը մտերմիկ հարաբերություններ է ունեցել՝ առաջին անգամ հանդիպելով Երևանում 1926 թ., երբ աղջիկը սովորում էր Երևանի համալսարանի պատմագրական ֆակուլտետում: Նույն թվականին նրանք միասին եղել են Բաթումում: 1927 թ. Ժենյան մեկնում է Լենինգրադ՝ ուսումը շարունակելու տեղի համալսարանի ազգագրության բաժնում և վերադառնում 1931 թ.՝ աշխատանքի ընդունվելով Պատմության թանգարանում: Այստեղից, ազգագրական արշավախմբերի կազմում, նա հաճախ գործուղվում էր Զանգեզուր, որտեղ նրան ուղեկցում էր Բակունցը: Ուշագրավ է, որ «Ալպիական մանուշակը» Բակունցն ընթերցել է առաջին անգամ Ժենյայի համար դեռևս ձեռագիր վիճակում: Ի դեպ, Ժենյայի հայրը ևս գյուղատնտես է եղել, ինչը նրանց աշխարհայացքային մտերմությունը հաստատող հավելյալ պատրվակ կարող էր լինել (Իշխանյան 1976, 646; Հովսեփյան և այլք 1999, 210–213, 220–221; Սյունյաց երկիր 2024, 74–75; Բակունց և Ժենյա Գյուզալյան լուսանկարները տե՛ս Սյունյաց երկիր 2024, 38, 74; Ժենյա Գյուզալյանի մասին հմմտ. նաև Варданян 2003; Варданян 2005, 176):

Նկարչի նույնականացման վերաբերյալ Ռ. Իշխանյանը գրում է, որ «հնարավոր չէղավ պարզել, թե Բակունցը ինչ նկարչի է նկատի ունեցել և նրա՝ որտեղ ու ինչ առիթով կատարված ճեպանկարները» (Իշխանյան 1976, 646): Նկարչի հնարավոր թեկնածուներ կարող են լինել այն բոլոր գեղանկարիչները, լուսանկարիչներն ու զճանկարիչները, որոնց հետ շփվել է գրողը Սյունիքում 1920-ական թթ.: Նրանց թվում է առաջին հերթին Մարտիրոս Սարյանը, որն, ի դեպ Հնությունների պահպանության կոմիտեի առաջին նախագահն էր, իսկ հետագայում՝ մշտական անդամը (Սարյան-Բակունց կապերի, Սարյանի՝ Բակունցին Զանգեզուրում այցելության մասին տե՛ս Բակունց 1976, 122–124; Աթաբեկյան 1996, 68–69; Հովսեփյան և այլք 1999, 5, 149): Բակունցը շփումներ է ունեցել նաև Ասլամազյան քույրերի, Թերլեմեզյանի, Տարագրոսի և Գուրոսի հետ: Վերջինիս լուսանկարած «Բակունցի ընտանիքը» գտնվում է գրողի տուն-թանգարանում (Արգամ Երանոսյան, Բանավոր հաղորդում, 11.08.2025): Սակայն, հայտնի է նաև, որ Բակունցն ինքը լուսանկարչական ապարատ է ունեցել

և զբաղվել լուսանկարչությամբ (Վարդան Սարգսյան, Բանավոր հաղորդում, 11.08.2025):

Ինչ վերաբերում է հնագետին, Ռ. Իշխանյանը կարծում է, որ պատմվածքը գրվել է հեղինակի և նրա բարեկամ երկրաբան Տիգրան Զրբաշյանի՝ Մեղրու շրջան կատարած մի ուղևորությունից հետո. «Նրանք, մի երկրորդ անձի ուղեկցությամբ այցելել են Մեղրու շրջանի մի շարք վայրեր, այդ թվում՝ ավերակ բերդեր: Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ այդ ուղևորությունը կատարվել է 1926 թ. ուշ գարնանը կամ ամռանը: Բակունցի մի այլ բարեկամի՝ պատմաբան Մորուս Հասրաթյանի վկայությամբ ևս այդ ուղևորությունը 1926 թ. է տեղի ունեցել»... «Ալպիական մանուշակում» իրական փաստերի համեմատ կարևոր փոփոխությունն այն է, որ ինքը՝ գրողը դարձել է նկարիչ, իսկ երկրաբան ուղեկիցը՝ հնագետ...»... «Ինչ վերաբերում է Բակուր Իշխանի դամբարանը որոնող հնագետին, ապա գրողը հնարավոր է, որ նկատի է ունեցել պատմաբան-հնագետ Մ. Հասրաթյանին: Ավելի ճիշտ, իր իրական ուղեկից Տ. Զրբաշյանին, ըստ պատմվածքի բովանդակության պահանջի, փոխարինել է հնագետով» (Իշխանյան 1976, 646–647; հմմտ. Աթաբեկյան 1996, 89; Սյունյաց երկիր 2024, 110):

Ինչ է հայտնի պատմաբան-հնագետ Մ. Հասրաթյանի այս առնչության վերաբերյալ (Մ. Հասրաթյանի մասին մանրամասն տե՛ս Հասրաթյան 1985; 2007; Արտավազդ 2015; Պատմության ինստիտուտ 2017; Դոլուխանյան 2022):

Այսպես, իր հուշերում Մ. Հասրաթյանը խոսում է «Ալպիական մանուշակի» հրապարակման և տպաքանակի արագ սպառման մասին, բայց այլ մանրամասներ չի հաղորդում (Հասրաթյան 2007, 44; հմմտ. Արտավազդ 2015, 17, 19):

Հասրաթյանի աշակերտներից Յուրի Արտավազդը, անդրադառնալով Հասրաթյանի ու Բակունցի հարաբերություններին, մեջբերում է «Ալպիական մանուշակը» և ենթատեքստում ակնարկում, որ հնագետը Հասրաթյանն է (Արտավազդ 2015, 22; նույնը հմմտ. Հասրաթյան 2007, 153):

Հասրաթյանի աշակերտներից Աելիտա Դոլուխանյանը նմանապես գրում է. «Եթե առաջ ծնողներս էին խոսում Մ. Հասրաթյանի մասին, ապա արդեն ես էի խոսում ու քույրս, որ ինձնից ութ տարով փոքր էր և հիացել էր Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքով, գյուտ արածի նման ասաց, որ հնագետի կերպարը Մ. Հասրաթյանին է պատկերում: Եվ դա ճշմարտություն էր, որովհետև հիանալի ճանաչելով կյանքն իր մեծ ու փոքր խնդիրներով, Մ. Հասրաթյանը միշտ մնաց մեծ ու վեհ գործերի ոլորտներում և երբեք չիջավ սովորական մարդկանց մակարդակին» (Դոլուխանյան 2017, 252):

Քննարկվող հարցի վերաբերյալ կարևոր տեղեկություններ հայտնեց Մ. Հասրաթյանի որդի Բակուրի դուստրը՝ Նարինե Հասրաթյանը. «Հայրս պատմում էր, որ Բակունցն ու պապիկս շատ մոտ են եղել: Միասին այցելել են Կաքավաբերդ, որտեղ պապիկս գտել է Բակուր Իշխանի տապանաքարը: Այդ պահին տատիկս հղի է եղել, և նրանք տեղում որոշել են, որ երբ երեխան ծնվի նրան կկոչեն Իշխան Բակուրի անունով: Հայրիկս՝ Բակուրը, ծնվել է 1927 թ. հունվարին: Շատ հավանական է, որ «Ալպիական մանուշակ»-ում հիշվող հնա-

գետը պապիկս է, թեև ոչ մի փաստաթուղթ այդ մասին գոյություն չունի» (Նարինե Հասրաթյան, Բանավոր հաղորդում, Երևան, 11.08.2025; Հասրաթյանի անդրանիկ որդու՝ Բակուրի մասին տե՛ս Դոլուխանյան 2022, 28):

Առկա տվյալները ցույց են տալիս, որ Բակունցն ու Հասրաթյանն իրոք մտերիմներ են եղել, միասին նույնիսկ որոշել են իրենց զավակներին սյունեցի իշխանների անուններով կոչել՝ Բակուր (Հասրաթյան) և Սևադա (Բակունց) (Պատմության ինստիտուտ 2017, 67, 127, 133, 145, 150; Դոլուխանյան 2022, 12, 30, 30, 36; Հասրաթյանի հուշերը Բակունցի մասին տե՛ս Հասրաթյան 2007, 42–46; Արտավազդ 2015, 13–28, 55, 59): Հայտնի է, որ 1936 և 1954 թթ. Հասրաթյանի անունը շոշափվել է Բակունցի մեղադրման և արդարացման գործերում (Գասպարյան 2009, 84, 253, 512):

Նշենք նաև, որ 1922–1924 թթ. Հասրաթյանը սովորել է Երևանի համալսարանի պատմագրական ֆակուլտետում, եղել, ի թիվս այլոց, նաև հնագետ Աշխարհբեգ Քալանթարի աշակերտը՝ դառնալով վերջինիս կազմակերպած համալսարանական ուսանողական հնագիտական խմբակի վարչության անդամ (Հասրաթյան 2007, 51; Պատմության ինստիտուտ 2017, 10, 59; Դոլուխանյան 2022, 22–23): Ուսումը ստանալուց հետո վերադարձել է Սյունիք՝ անցնելով կոմերիտական դեկավար աշխատանքի: Այս տեսանկյունից լիովին հավանական է, որ Բակունցի հետ ուղիղ շփում կարող էր տեղի ունենալ «Ալպիական մանուշակ» ստեղծման ժամանակահատվածում և համատեքստում: Բայց շեշտենք նաև, որ Հասրաթյանը պոետիկ հոգով մարդ էր, գրում էր պատմվածքներ և բանաստեղծություններ (Հասրաթյան 2007, 109–150; Արտավազդ 2015, 155–164; Պատմության ինստիտուտ 2017, 168–175; Դոլուխանյան 2022, 147–168): Այս պարագայում արդյոք կարո՞ղ էր հենց նա լինել պատմվածքի ավելի չոր և ռացիոնալ բնութագրվող հնագետը:

Նորահայտ մի փաստաթուղթ կարող է լրացնել արտահայտված կարծիքները հնագետի նույնականացման վերաբերյալ: Մասնավորապես, պահպանվել է ՀՍԽՀ Լուսժողկոմատի Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի N 437 մանդատը, որը թվագրվում է 1926 թ. դեկտեմբերի 17-ով և տրված է Երևանում կոմիտեի նախագահ Ա. Թամանյանի ստորագրությամբ ու կոմիտեի կնիքով, որում արձանագրվում է հետևյալը. «Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեի կողմից, գիտնական քարտուղար Աշխարհբեգ Քալանթարի գլխավորությամբ և մասնակցությամբ լուսանկարիչ Արտաշես Վրույրի, Հոդժողկոմի հոդբաժնի փոխվարիչ Ակսել Բակունցի և երկրաչափի, գործողվում է Թալին հնագիտական էքսպեդիցիա, ուսումնասիրություններ կատարելու համար: Կոմիտեն խնդրում է խորհրդային բոլոր հաստատություններին ցույց տալ էքսպեդիցիային ամենայն աջակցություն» (Քալանթար 1926):

Այս փաստաթղթից պարզ է դառնում, որ Բակունցը «Ալպիական մանուշակը» գրելու տարիներին հանդիպել է նաև հայտնի հնագետ Ա. Քալանթարին (որի մասին մանրամասն տե՛ս Բայրամյան 2024) և հայտնի լուսանկարիչ Ա. Վրույրին (մանրամասն՝ Փաշայան 1989), ու տրամաբանական է կարծելը, որ

նրանք կարող էին պատկերված լինել պատմվածքում (գուցե ուղեկցորդն էլ երկրաչափն է): Այս տեսակետի հավանականության մասին կարող է փաստել նաև այն հանգամանքը, որ մանդատի արձակման ժամկետը (1926 թ. դեկտեմբեր, իսկ աշխատանքները թերևս պիտի տեղի ունենային հաջորդ տարի՝ 1927-ին) համապատասխանում է «Ալպիական մանուշակի» ստեղծման տարեթվերին, և, բացի այդ, հնագետն ու նկարիչը (չհաշված նրանց ուղեկցորդ երկրաչափին) միասին են հանդես գալիս նույն փաստաթղթում: Ճիշտ է, որպես գործուղման վայր հիշվում է Թալինը. սակայն այստեղ չի բացառվում, որ հեղինակը դիմել է իմպրովիզացիայի՝ թալինյան փորձը վերարտադրելով Սյունիքի հարազատ լանդշաֆտներում, իսկ լուսանկարչին փոխարինել է նկարչով («Ալպիական մանուշակի» տեքստից երևում է, որ «նկարել» բառը Բակունցն օգտագործում է նաև գրչանկարել/գծագրել իմաստով. հմմտ. «Ֆետրե գլխարկով մարդը նկարեց պարիսպների փլվածքը, սրածայր բուրգը և պատերի հետքերը»: «Լուսանկարել» բառը տեքստում բացակայում է): Հնարավոր է, որ նրանք կարող էին հանդիպել նաև Սյունիքում, որտեղ, ըստ առկա տվյալների, հուշարձանների արձանագրման աշխատանքներ է ձեռնարկել Հնությունների պահպանության կոմիտեն և մասնավորապես Կոմիտեի գիտնական քարտուղար Քալանթարը 1921, 1923–1926, 1928 և 1937 թթ.: Այս մասին վկայող փաստաթղթերում հաճախ է հանդիպում Սյունյաց թեմի առաջնորդ և Տաթևի վանքի վանահայր Արտակ եպիսկոպոսը, որը 1925–1926 թթ. եղել է զանգեզուրյան հնությունների հսկիչը և առնչություններ ունեցել հողժողկոմի հետ (Հայաստանի ազգային արխիվ 1921–1937): Բացի այդ, հայտնի է, որ Բակունցը հաճախ է այցելել Տաթևի վանք և նույնիսկ տեղում ուսումնասիրություններ կատարել (Իշխանյան 1960, 66):

Ի հաստատումն վերոհիշյալի՝ բերենք ևս մեկ հավելյալ տեղեկություն: Ըստ հնագետ Ինեսա Կարապետյանի՝ 1950 թ. Արտաշես Վրոյրն իր առանձնատանը (ներկայիս Նժդեհի հրապարակի մոտ), ցույց է տվել և պատմել է Ի. Կարապետյանին ու նրա մայրիկին իր մոտ պահպանվող լուսանկարների մասին ու, մի ինչ-որ լուսանկարի համատեքստում, հարցրել Ի. Կարապետյանին. «Ակսել Բակունցի «Ալպիական մանուշակը» կարդացե՞լ ես», վերջինս պատասխանել է՝ «Այո՛»: Ապա լուսանկարիչը շարունակել է. «Այդտեղ, հնագետի մասին խոսելիս, նկատի է ունեցել Աշխարհբեգ Քալանթարին» (Ի. Կարապետյան, Բանավոր հաղորդում, 27.04.2022, Երևան):

Հայտնի է, որ 1924–1926 թթ. Բակունցն աշխատել է Գորիսում՝ որպես Զանգեզուրի գավառական գյուղատնտես, գավգործկոմի հողբաժնի վարիչ, իսկ 1926–1931 թթ.՝ Երևանում՝ որպես հողժողկոմատի հողվարչության պետի տեղակալ: Այս ընթացքում Բակունցը աշխատանքի բերումով առնչվել և հետաքրքրվել է հնագիտությամբ՝ համագործակցելով Հնությունների պահպանության կոմիտեի հետ, ինչի մասին, բացի վերոհիշյալից, վկայում է ևս մեկ փաստ: Մասնավորապես, ըստ «Խորհրդային Հայաստան» թերթում հրապարակված մի հաղորդագրության՝ նույն 1926 թ. Կոմիտեն հնություններ և համապատասխան լուսանկարներ է ստացել տարբեր անձանցից, որոնց թվում՝ «Ընկ. Ակսել-Ալեքսանդր

Բակունցից՝ 1 լուսանկար Զանգեզուրի մի անհայտ հուշարձանի» (Անանուն 1926, 3; հմմտ. Ասատրյան 2022, 105):

Քննարկում

XX դարասկզբին Ակսել Բակունցը քննարկում է համամարդկային խնդիրներ գեղեցիկի ընկալման և ընդհանրապես մարդու առաքելության մասին՝ որպես գործիք օգտագործելով հայկական բնությունն ու հայ մարդուն: Իր գրչով նա նոր շունչ է տալիս հայկական «հավերժական» լանդշաֆտին՝ վերարտադրելով լեռնային Հայաստանի պատկերները՝ ալպիական գեղեցկությամբ, գյուղական կենցաղին բնորոշ տեսարաններով, ավերակ հնագիտական հուշարձաններով, որոնց միջավայրում, ինչպես իմպրեսիոնիստական կտավում, հայտնվում է մարդու ուրվանկարը՝ իր տարբեր արտահայտչաձևերով: Իդեալականացնելով գյուղը, երկրագործությունը և սովորական մարդկանց՝ Բակունցի ստեղծագործությունը մոտենում է իմպրեսիոնիզմին (հմմտ. Աղաբաբյան 1963, 15; Գրականության ինստիտուտ 1959, 7, 197; Աթաբեկյան 1996, 46; Սյունյաց երկիր 2024, 22):

«Ալպիական մանուշակ» պատմվածքում վերոհիշյալ միջավայրը արտացոլելիս, բացի սովորական գյուղացուց և նկարչից, Բակունցն օգտագործում է զարգացումը և քաղաքակրթությունը խորհրդանշող հնագետի (և, ինչ-որ տեղ թաքնված ազգագրագետի) կերպարը՝ դրանով կարծես պատմականություն հաղորդելով ու շարժման մեջ դնելով անփոփոխ թվացող բնական և մարդկային պատկերները: Հնագետը, նկարչի նման, «ստեղծագործում» է դաշտում, բայց ոչ թե նկարելով, այլ նկարագրելով: Նկարչի ու հնագետի կերպարները ռոմանտիկ մարդու հակադրամիասնությունն են խորհրդանշում:

Անկախ նրանից, թե կոնկրետ ո՞ր հնագետին է նկատի ունեցել Բակունցը իր պատմվածքում (ընկերոջը՝ Մորուսի՞ն, թե՞ նրա ուսուցչին՝ Աշխարհբեգին, կամ գուցե նրանց երկուսին միասին. վերջիններիս կարող էր միանալ նաև երկրաբան Տիգրանը), հեղինակը դիպուկ է վերարտադրում ռացիոնալ գիտնականի ներաշխարհը՝ վերջինիս հակադրելով իրականությանը բարձրից դիտող նկարչին ու ցածրից նայող սովորական մարդուն:

Ճակատագրի հեգնանքով «Ալպիական մանուշակի» տողերի տակ թաքնված անձինք՝ նույն ինքը Բակունցը, Ժենյան, Մորուսը և Աշխարհբեգը, արժանացան նույն ճակատագրին՝ դառնալով փոփոխական պատմության գեներացրած բռնաճնշման զոհը: Ու թեև նրանք այլևս չհանդիպեցին իրար, սակայն նույն ճակատագրի հեգնանքով, հանդիպեցին նրանց ձեռագրերը: Մասնավորապես հայտնի է, որ ձերբակալություններից հետո հայ մտավորականների ձեռագրերը տեղափոխվել էին Գրապալատ (ներկայիս Գրականության և արվեստի թանգարանի տեղում), որտեղ Բակունցի ու Քալանթարի ձեռագրերն իրար կողք են եղել (Հովսեփյան և այլք 1999, 216):

Շնորհակալական

Խորին շնորհակալություն ենք հայտնում Աշխարհբեգ Քալանթարի թոռանը՝ աստղաֆիզիկոս, պրոֆ. Վահե Գուրզադյանին, տրամադրած արխիվային նյութերի, ինչպես նաև Մորուս Հասրաթյանի թոռանը՝ հուշարձանագետ Նարինե Հասրաթյանին՝ հայտնած տեղեկությունների համար: Օգտակար խորհուրդների և աջակցության համար շնորհակալություն ենք հայտնում Բակունցի տուն-թանգարանի տնօրեն Վարդան Սարգսյանին, հուշարձանագետ Արմեն Ասատրյանին, հնագետ Մարիամ Ամիրյանին, ազգագրագետներ Սուրեն Հոբոսյանին, Ռաֆիկ Գաբրիելյանին և Արզամ Երանոսյանին:

Գրականություն/References/Литература

1. Աթաբեկյան Ս. 1996, Ակսել Բակունց. պատմվածքի վիպական աշխարհը, Երևան, ԵՊՀ հրատ.:
Atabekyan S. 1996, Aksel Bakunts: The Epic World of the Short Story, Yerevan, Yerevan State University Press (in Armenian).
2. Աղաբաբյան Ս. 1963, Ակսել Բակունց, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Aghababyan S. 1963, Aksel Bakunts, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR (in Armenian).
3. Անանուն 1926, Հնությունների պահպանության կոմիտեում, Խորհրդային Հայաստան, 1926, N 109, 11 մայիսի, 3:
Anonymous 1926, In the Committee for the Protection of Antiquities, Soviet Armenia, N 109, May 11, 3 (in Armenian).
4. Ասատրյան Ա. 2022, Հուշարձանների ուսումնասիրությունը Խորհրդային Հայաստանում 1920-ական թվականներին, Երևան, «Մեկնարկ»:
Asatryan A. 2022, The Study of Monuments in Soviet Armenia in the 1920s, Yerevan, Meknark (in Armenian).
5. Արտավազդ Յու. 2015, Մորուս Հասրաթյան. թանկագին քարը, Երևան, «ՎՄՎ պրինտ»:
Artavazd Yu. 2015, Morus Hasratyan: The Precious Stone, Yerevan, VMV Print (in Armenian).
6. Բակունց Վ. 1976, Մեծ հույզերի սերմնացանը, Երևան, «Հայաստան»:
Bakunts V. 1976, The Sower of Great Emotions, Yerevan, Hayastan (in Armenian).
7. Բայրամյան Կ., Գնունի Ա., Բորիսյան Ա. 2022, Ալպիական մանուշակ. հայկական լանդշաֆտը Բակունցի ստեղծագործության մեջ և հնագետի կերպարը, Արախամյան Հ., Հովսեփյան Ռ., Սարատիկյան Ա. (խմբ.), Սյունիք. մշակույթը և բնությունը, Գիտաժողովի ամփոփագրեր, 26–28 ապրիլի, Երևան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 14–15:
Bayramyan K., Gnuni A., Bobokhyan A. 2022, Alpine Violet: The Armenian Landscape in Bakunts's Work and the Image of the Archaeologist. In: Abrahamyan H., Hovsepian R., Saratyan A. (eds), Syunik: Culture and Nature, Abstracts of the Conference, April 26–28, Yerevan, Institute of Archaeology and Ethnography of the NAS RA, 14–15 (in Armenian).

8. Բայրամյան Կ. 2024, Աշխարհիբեկ Քալանթարի հուշարձանապահական գործունեությունը, Թեկնածուական ատենախոսություն, Երևան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ:
Bayramyan K. 2024, The Monument Protection Activities of Ashkharhbek Kalantar, PhD Thesis, Yerevan, Institute of Archaeology and Ethnography of the NAS RA (in Armenian).
9. Գասպարյան Դ. 2009, Ակսել Բակունց. կյանքը և ստեղծագործությունը, Երևան, «Զանգակ»:
Gasparyan D. 2009, Aksel Bakunts: Life and Work, Yerevan, Zangak (in Armenian).
10. Գրականության ինստիտուտ 1959, Ակսել Բակունցի ստեղծագործությունը. հոդվածների ժողովածու, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
Institute of Literature 1959, The Work of Aksel Bakunts: A Collection of Articles, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR (in Armenian).
11. Դոլուխանյան Ա. 2017, Աշխարհի հնագույն իմաստությունն իր մեջ ամբարած գիտնականն ու պրոֆեսորը (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մորուս Հասրաթյանի ծննդյան 115-ամյակի առթիվ), Պատմաբանասիրական հանդես, N 3, 251–255:
Dolukhanyan A. 2017, The Scientist and Professor who Stored the Ancient Wisdom of the World in Himself (On the 115th Anniversary of the Corresponding Member of the NAS RA Morus Hasratyan), Historical and Philological Journal, N 3, 251–255 (in Armenian).
12. Դոլուխանյան Ա. 2022, Մորուս Հասրաթյան. ինքնության և ժառանգության վավերագիրը, Երևան, Newmag:
Dolukhanyan A. 2022, Morus Hasratyan: Documentary of Identity and Inheritance, Yerevan, Newmag (in Armenian).
13. Զարյան Ռ. 1975, Հուշապատում, հ. 1, Երևան, «Հայաստան»:
Zaryan R. 1975, Memoirs, vol. 1, Yerevan, Hayastan (in Armenian).
14. Իշխանյան Ռ. 1960, Ակսել Բակունց. կենսագրություն և մատենագիտություն, Երևան, «ՀՍՍՌ Ալ. Մյասնիկյանի անվ. պետական ռեսպուբլիկական գրադարան»:
Ishkhanyan R. 1960, Aksel Bakunts: Biography and Bibliography, Yerevan, Al. Myasnikan State Republican Library of the Armenian SSR (in Armenian).
15. Իշխանյան Ռ. 1965, Բակունցի լեզվական արվեստը, Երևան, «Միտք»:
Ishkhanyan R. 1965, The Linguistic Art of Bakunts, Yerevan, Mitk (in Armenian).
16. Իշխանյան Ռ. 1974, Բակունցի կյանքն ու արվեստը, Երևան, «Հայաստան»:
Ishkhanyan R. 1974, The Life and Art of Bakunts, Yerevan, Hayastan (in Armenian).
17. Իշխանյան Ռ. 1976, Ծանոթագրություններ՝ Ակսել Բակունց, Երկեր, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Ishkhanyan R. 1976, Commentaries to Aksel Bakunts, Works, vol. 1, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR (in Armenian).
18. Իշխանյան Ռ. 1979, Ակսել Բակունց (Ծննդյան 80-ամյակի առթիվ), Լրաբեր հասարակական գիտությունների, N 6, 93–101:
Ishkhanyan R. 1979, Aksel Bakunts (On the Occasion of the 80th Anniversary), Herald of Social Sciences, N 6, 93–101 (in Armenian).
19. Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախշյան Ստ.Տ., Բարսեղյան Հ.Խ. 1986, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, ԵՊՀ հրատ.:

- Hakobyan T.Kh., Melik-Bakhshyan St.T., Barseghyan H.Kh. 1986, Dictionary of Toponyms of Armenia and Surrounding Regions, vol. 1, Yerevan University Press (in Armenian).
20. Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախշյան Ստ.Տ., Բարսեղյան Հ.Խ. 1988, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, ԵՊՀ հրատ.։
Hakobyan T.Kh., Melik-Bakhshyan St.T., Barseghyan H.Kh. 1988, Dictionary of Toponyms of Armenia and Surrounding Regions, vol. 2, Yerevan University Press (in Armenian).
21. Հայաստանի ազգային արխիվ 1921–1937, ֆոնդ 1063, ցուցակ 1, գործ 10, էջ 5–8; էջ 58–59; ֆոնդ 1063, ցուցակ 1, գործ 15, էջ 16; ֆոնդ 1063, ցուցակ 1, գործ 18, էջ 26; ֆոնդ 1063, ցուցակ 1, գործ 35, էջ 4–5; ֆոնդ 113, ցուցակ 38, գործ 140, էջ 24–25; ֆոնդ 122, ցուցակ 1, գործ 937, էջ 46–53; ֆոնդ 20, ցուցակ 10, գործ 712, էջ 3–7:
National Archives of Armenia 1921–1937, Fund 1063, Collection 1, Case 10, Page 5–8; Page 58–59; Fund 1063, Collection 1, Case 18, Page 26; Fund 1063, Collection 1, Case 15, Page 16; Fund 1063, Collection 1, Case 35, Page 4–5; Fund 113, Collection 38, Case 140, Page 24–25; Fund 122, Collection 1, Case 937, Page 46–53; Fund 20, Collection 10, Case 712, Page 3–7 (in Armenian).
22. Հասրաթյան Մ. 1985, Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.։
Hasratyan M. 1985, Historical and Archaeological Studies, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR (in Armenian).
23. Հասրաթյան Մ. 2007, Հուշաբեկորներ, արձակ էջեր և...., Բեյրութ, Մ.Ա.Հ.Ա.Ե. միության գրասենեակ։
Hasratyan M. 2007, Fragments of Memories, Prose Pages and...., Beirut, U.A.E.C.N.E. Publications (in Armenian).
24. Հովսեփյան Ն., Թունյան Զ., Միքայելյան Ք. (խմբ.) 1999, Ակսել Բակունցը ժամանակակիցների հուշերում, Երևան, «Հրազդան 1» ՍՊԸ։
Hovsepyan N., Tunyan J., Mkrtchyan K. (eds) 1999, Aksel Bakunts in the Memoirs of His Contemporaries, Yerevan, Hrazdan 1 LLC (in Armenian).
25. Հուշարձանների ցուցակ 2002, Պետական ցուցակ Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, Երևան, Մշակույթի նախարարություն։
List of Monuments 2002, State List of Immovable Monuments of History and Culture of the Republic of Armenia, Yerevan, Ministry of Culture (in Armenian).
26. Մկրտչյան Հ. 1958, Ակսել Բակունց. կյանքը և ստեղծագործությունը, Երևան, «Հայպետհրատ»։
Mkrtchyan H. 1958, Aksel Bakunts: Life and Work, Yerevan, Haypethrat (in Armenian).
27. Պատմության ինստիտուտ 2017, Մորուս Հասրաթյան. նշանավոր սյունեցին, ակա-նավոր պատմաբանն ու բանասերը, Երևան, Պատմության ինստիտուտ։
Institute of History 2017, Morus Hasratyan: The Prominent Native of Syunik, an Outstanding Historian and Philologist, Yerevan, Institute of History (in Armenian).
28. Պետրոսյան Ա. 2022, Վահան Տերյանի «Արևելյան Եվրոպայի հնագույն բնակիչները» ուսումնասիրությունը, Բաղայան Մ., Մարտիրոսյան-Օլջանսկի Ք., Բոբոխյան Ա. (խմբ.), Ծովային Հայաստան. Ուղուրի-Էթիունի երկրի հնագիտական ժառանգու-թյունը, Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 475–479:

- Petrosyan A. 2022, Vahan Terian's Study "The Ancient Inhabitants of Eastern Europe". In: Badalyan M., Martirosyan-Olshansky K., Bobokhyan A. (eds), *Armenia Maritima: The Archaeological Heritage of the Land of Uduri-Etiuni*, Yerevan, Institute of Archaeology and Ethnography, 475–479 (in Armenian).
29. Սյունյաց երկիր 2024, Ակսել Բակունցի 125-ամյակին նվիրված նյութեր, Սյունյաց երկիր 11 (620), 1–151:
Syunik Land 2024, Materials Dedicated to the 125th Anniversary of Aksel Bakunts, Syunik Land 11 (620), 1–151 (in Armenian).
30. Փաշայան Ռ. 1989, Արամ և Արտաշես Վրույրներ, Երևան, «Հայաստան»:
Pashayyan, R. 1989, *Aram and Artashes Vruyr*, Yerevan, Hayastan (in Armenian).
31. Քալանթար Ա. 1926, ՀՍԽՀ Լուսժողկոմատի Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի N 437 մանդատ, դեկտեմբերի 17, Աշխարհբեկ Քալանթարի ընտանեկան արխիվ, Պահվում է հնագետի թոռան՝ Վահե Գուրզադյանի մոտ, Ինքնագիր, 1 էջ:
Kalantar A. 1926, Mandate N 437 of the Committee for the Protection of Antiquities of Armenia under the People's Commissariat of Enlightenment of the ASSR, December 17, Family Archive of Ashkharhbek Kalantar (Kept by the Grandson of the Archaeologist, Vahe Gurzadyan), Manuscript, 1 p. (in Armenian).
32. Варданян Л.М. 2003, Евгения Тиграновна Гюзальян – забытое имя в армянской этнографии, Репрессированные этнографы, сост. и ред. Д.Д. Тумаркин, вып. 2, Москва, «Восточная литература», 322–346.
Vardanyan L.M. 2003, Evgenia Tigranovna Gyuzalyan – A Forgotten Name in Armenian Ethnography, in D.D. Tumarkin (comp. and ed.), *Repressed Ethnographers*, vol. 2, Moscow, Vostochnaya Literatura, 322–346 (in Russian).
33. Варданян Л.М. 2005, Степан Лисициан и истоки армянской этнографии, Ереван, «Гитутюн».
Vardanyan L.M. 2005, *Stepan Lisitsian and the Origins of Armenian Ethnography*, Yerevan, Gitutyun (in Russian).